Հաստատում եմ

Տնօրեն ---------------------

<<01>> -------------------------2023թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<Ֆոտոն>> վարժարան, 12տնտ1

------------------------------------------------------------

ուսումնական հաստատության անվանումը,դասարան

Սարգսյան Նաիրա Հակոբի

------------------------------------------------------------

Դասղեկի ազգանունը,անունը,հայրանունը

<<2023-2024>>ուստարի

Ուսումնական հաստատության դասարանի ղեկավարի աշխատանքային տարեկան ծրագիր

ՀՀ Շիրկի մարզի ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու Ֆոտոն վարժարան

ՊՈԱԿ դասարան 12տնտ1

Դասղեկ Նաիրա Սարգսյան

**2023-2024 ուստարի**

Կրթական դաստիարչական աշխատանքների

Հիմնական ուղությունները

1.Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը).

Դասարանը բաղկացած է 20 սովորողներից(13 տղա,7աղջիկ)

Դասարանը բաղկացած է 22 աշակերտներից 13տղա, 9աղջիկ:Դասարանում ունենք աշխատասեր և համերաշխ աշակերտական խումբ:Դասարանում ընտրված է ավագ Շողիկ Մարգարյանը ընտրված է ծնողկոմիտե և առկա են բոլոր բավարար պայմանները նոր ուսումնական տարին սկսելու համար:

2.Ուսումնադաստիարչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

ա բ գ դ

Աշակերտներին ծանոթացնել վարժարանի օրակարգին, հսկել և ղեկավարել աշակերտներին դասագրքերով ապահովելու աշխատանքը:Հետևել աշակերտների տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի նպատակային կազմակերպմանը:Նպաստել շնորհալի աշակերտների ինքնատիպ ընդունակությունների բացահայտմանն ու կատարելագործմանը:Դասարանին մասնակից դարձնել քաղաքում անցկացվող մշակութային միջոցառումներին:Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդմանը և ֆիզ. դաստիարակությանը նպաստող միջոցառումներ:Դասարանում ձևավորել համերաշխ հանրույթ:

**3.**Հայեցի դաստիարակություն

**3.1 Յոգևոր դաստիարակություն**

Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու տեսանկյունից:**Այս կարևորությունը գիտակցելով՝աշակերտներին քրիստոնյա դաստիարակելու համար, անցկացնել զրույցներ հինգ տաղավար տոների վերաբերյալ:**

**3.2 Գ եղա գիտ ա կա և դա ստ իա րա կություն**

Միջոցառումների (ցերեկույթներ,այցեր թանգարաններ,թատրոն,կինո,էքսկուրսիաներ), զրույցների միջոցով աշակերտների մեջ սեր արթնացնել արվեստի տարբեր ճյուղերի նկատմամբ,բարձրացնել նրանց գեղագիտական ճաշակը:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Դասարանի հետ անցկացվող միջոցառումների,զրույցների միջոցով բարձրացնել աշակերտների ազգային ինքնագիտակցությունը, նրանց մեջ ամրապնդել հայրենասիրության, հայրենիքի առջև

ունեցած պարտքի գաղափարները:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Համագործակցելով ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ՝հսկել,որ ուսումնական գործընթացը համապատասխանի աշակերտների տարիքային առանձնահատկություններին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Դասղեկի ժամերի և այլ հանդիպումների ընթացքում ուշադրություն դարձնել աշակերտների մեջ աշխատանքային ընդունակությունների ձևավորման վրա:Դասարանին մասնակից դարձնել շաբաթօրյակներին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Էքսկուրսիաների,բնության գրկում զբոսանքների,զրույցների միջոցով աշակերտների մեջ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:Աշակերտներին մասնակից դարձնել քաղաքում իրականացվող բնապահպանական միջոցառումներին:

## 4.Դպրոց-ընտանիք կապը.

Մշտական կապ պահպանել ծնողական կազմի հետ,իրականացնել անհատական զրույց ծնողների հետ,ծանոթ լինել աշակերտների ընտանեկան պայմաններին:

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

| Ուս Շ. | Ուսումնակադաստ. աշխատ. բովանդակությունը | Կ. Ժ. | կատարողներ |
|---|---|---|---|
| 1 | Կազմակերպչական աշխատանք:Ծանոթացում աշակերտների հետ,դասագրքերի բաշխում, դասարանի ավագի ընտրություն:Ավագի իրավունքների և պարտականությունների ծանուցում: | | Դասղեկ, աշակերտներ |
| 2 | Հերթապահության գրաֆիկի կազմում և հաստատում:Ծնողական ժողովի անցկացում,ծնողական խորհուրդի ընտրություն: | | դասղեկ |
| 3 | Զրույց <<Արդյոք մենք մեր հայրենիքի արժանի զավակներն ենք>> խորագրով: | | աշակերտներ |
| 4 | <<Իմ նոր ուսուցիչները>> խորագրով զրույց աշակերտների հետ: | | Դասղեկ,աշակերտներ |
| 5 | Զրույց նվիրված ուսուցչի օրվան՝<<Իսկական դաստիարակը պետք է լինի միջնորդ,մի կողմից՝դպրոցի,մյուս կողմից կյանքի և գիտության միջև>>(Ուշինսկի) | | աշակերտներ |
| 6 | Զրույց <<Ինչպես ունենալ կուռ, կայուն կոլեկտիվ>>թեմայով | | Դասղեկ, աշակերտներ |
| 7 | Կատարել դասալսումներ,խորհրդակցել դասավանդող ուսուցիչների հետ | | Դասղեկ, աշակերտներ |
| 8 | Կատարված դասալսումների տպավորությունները և դասավանդող ուսուցիչների տեսակետները քննարկել աշակերտների հետ: | | դասղեկ |
| 9 | Կազմակերպել խաղ-մրցույթ,նախապատրաստել հարցեր:Դասարանը բաժանել խմբերի,խրախուսել հաղթող խմբերին: | | Դասղեկ, աշակերտներ |
| 10 | Զրույց <<Արդյոք գոհ եմ ինձանից>> խորագրով, ինքնագնահատման և ինքնազարգացման ունակությունների ձևավորման նպատակով: | | դասղեկ |
| 11 | Զրույց <<Եթե ես հրաշագործ լինեի>>և <<ընկերասիրություն>> թեմայով | | դասղեկ |
| 12 | Զրույց<<Դեկտեմբերի 7՝հիշատակի օր>> | | աշակերտներ |
| 13 | Զրույց <<Ուսումնառությունը ոչ միայն անձնական գործ է,այլ նաև պարտք | | դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Կիսամյակի արդյունքների ամփոփում ծնողական ժողովով: | | |
| 2 | Զրույց <<Իմ ընկերները>> խորագրով: | | |
| 3 | Հայկական բանակի օրվան նվիրված զրույց և շնորհավորանքներ վարժարանի ուսուցիչներին: | | |
| 4 | Հոգևոր դաստիարակության նպատակով այցելել եկեղեցի,լսել պատարագ <<Տյարն ընդառաջ>> տոնի նախօրեին: | | |
| 5 | Զրույց <<Գեղեցիկը կփրկի աշխարհը>> խորագրով: | | |
| 6 | Մեր քաղաքի թանգարանները: (այցելություն) | | |
| 7 | Քաղաքավարության կանոնները և դրանց կիրառումը>> բանավեճ: | | |
| 8 | Հաճախումներին և առաջադիմությանը նվիրված քննարկումներ: | | |
| 9 | Պոեզիայի ժամ-մոր կերպարը բանաստեղծություններում: | | |
| 10 | Ազգային ծեսերը և տոնակատարությունները: | | |
| 11 | <<Դռները բացեք,գարուն է գալիս>> թեմայով զրույց: | | |
| 12 | Խաղ-մրցույթի անցկացում: | | |
| 13 | Զրույց <,Մասնագիտական կողմնորոշում>> թեմայով: | | |
| 14 | <<Իմ բառապաշարը>> թեմայով զրույց: | | |
| 15 | Հայոց ցեղասպանությունը և հզոր տերությունների վերաբերմունքը: | | |
| 16 | Զրույց <<Իմ ձեռքբերումները <<Ֆոտոնում>> թեմայով: | | |
| 17 | Քննարկում <<Գրքերը և դրանց ազդեցությունները>>թեմայով: | | |
| 18 | Զրույց <<Հաղթական մայիս>> և <<Ինչ տվեց հայ ժողովրդին 9-ը մայիսի>>թեմաներով: | | |
| 19 | <<Հայկական պետականության հռչակումը՝1918թ. Մայիսի 28>> | | |
| 20 | Կիսամյակային առաջադիմությանը նվիրված քննարկում | | |
| 21 | <<Վերջին զանգ>> | | |